ՀՈՎՈՒԱՊԵՏ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (1780-1799)

ՅԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆԵԱՆ (Amirjanyan.hasmik@rambler.ru)

ՄՈՒՏՔ

Հայոց պատմութեան տարբեր ժամանակներում միասնական քաղաքական համակարգի բացակայութեան եւ իշխանական համակարգի մասնատուածութեան պայմաններում առանձնայատուկ նշանակութիւն է ստացել Հայ Եկեղեցին՝ իր ստանձնած քաղաքական գործառոյթներով: Էջմիածնի կաթողիկոսների դերն առաւել ընդգծւում է Երեւանի խանութեան ԺԸ. դարի Բ. կէսի քաղաքական իրավիճակում, երբ երկիրը վերածուել էր այնտեղ հաստատուած եւ միմեանց հետ պարբերաբար պատերազմող պարսիկ տարբեր խանութիւնների ասպատակութիւնների թատերաբեմի:

Հայ Եկեղեցու քաղաքական դերակատարութիւնն ուղղուած էր ոչ միայն երկրի ներքին ու արտաքին անվտանգութեանը, այլեւ նմանօրինակ գործառոյթի իրականացմանը՝ դրսի թեմերում: Մանաւանդ՝ երբ վտանգուած էին հայութեան միասնականութիւնն ու դաւանական անվտանգութիւնը:

Այս տեսանկիւնից առանձնայատուկ ուշադրութեան արժանի է ամէնայն հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու գահակալութեան շրջանը, երբ Պարսկաստանի տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանում (Երեւանի խանութիւնում) տիրում էր քաղաքական, ընկերատնտեսական անկայուն եւ դժուարին կացութիւն: Երկիրը գտնում էր պարսկական խաների միջեւ մղուող ներքին կռիւների, ծանր հարկային քաղաքականութեան, աւերի ու կողոպուտի, արտաքին յարձակումների պայմաններում, իսկ Էջմիածնի կաթողիկոսական աթոռը՝ մշտական վտանգի տակ:

Պարսկական խաների տիրապետութեան ժամանակ, հայ կաթողիկոսները դիմում էին ամենատարբեր միջոցների՝ հայութեանն ու մայր աթոռը հնարաւոր վնասներից զերծ պահելու համար: Այդ հիմամբ էլ ձեւաւորւում է "գործակցութեան", քաղաքական յարաբերութիւնների ուրոյն համակարգ՝ մի կողմից Էջմիածնի կաթողիկոսի եւ Երեւանի խանի, միւս կողմից՝ կաթողիկոսի ու խանութեան տարբեր տիրակալների միջեւ:

Կաթողիկոսը, որպէս հոգեւոր առաջնորդ, մեծ ազդեցութիւն ունէր ոչ միայն հայութեան, այլեւ պարսիկ կառավարիչների շրջանում. վերջիններս հաշուի էին նստում նրա հետ: Դրան նպաստում էր տարածաշրջանում հայերի ու Հայաստանի զբաղեցրած կարեւոր տնտեսական եւ ռազմաքաղաքական դիրքը: Օգտագործելով պատեհ պահը, կաթողիկոսները փորձում էին Երեւանի խանութիւնում, Պարսկաստանում իշխող տիրակալներից, անգամ պարսից շահից ձեռք բերել հրամանագրեր, որոնցով վերահաստատւում էին կաթողիկոսի կալուածային, հարկային եւ այլ իրաւունքները:

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԱՄԷՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Իր գահակալութեան ամբողջ ընթացքում Կարնեցին մեծ ջանքեր գործադրեց Հայ Եկեղեցու իրաւունքների, վանքի գոյքի պահպանման, վանականների անվտանգութեան, հայ բնակչութեանը աւերածութիւններից, կոտորածներից ու գերեվարումից զերծ պահելու ուղղութեամբ: Մշտական պատերազմների ու երկպառակութիւնների պատճառով դժուար էր պաշտպանել մայր աթոռը: Ուստի կաթողիկոսը որդեգրեց իւրօրինակ գործելաոճ՝ ընտրելով օտար իշխողների հետ յարաբերութիւններ պահպանելու, փոխզիջումների, սիրաշահումների դիմելու, նուիրատուութիւններ կատարելու տարբերակը: Այդ միջոցներով Կարնեցին ապահովում էր Երեւանի, Նախիջեւանի, Խոյի եւ այլ վայրերի պարսիկ իշխողների հետ իր կապերը: Կաթողիկոսին յաջողւում էր այդօրինակ ճանապարհով ոչ միայն հարթել տարբեր վէճեր, հաստատել հանդարտութիւն, այլեւ՝ պահպանել էջմիածինը, հայերի վերաբերեալ բազմաթիւ խնդիրներ լուծել:

Հայոց կաթողիկոսի միջնորդութիւնների շնորհիւ տարբեր վայրերի իշխողներն լուծում էին ներքին ու արտաքին, քաղաքական, տնտեսական եւ այլ խնդիրներ, կարեւորագոյն հարցեր, ինչպէս՝ Երեւանի խանի ընտրութիւնը, մահմեդական տիրակալների միջեւ հաշտութիւն հաստատելը: Այդպիսով Կարնեցին փորձում էր կանխել հայ բնակչութեան գալիք չարիքը:

Երկրի դրութիւնը վատթարանում է յատկապէս Երեւանի Հուսէյին Ալի խանի (1762--83) գահակալութեան ժամանակ, երբ քոչուոր ցեղեր, օգտուելով խանի թուլութիւնից, ապստամբում են խանութեան դէմ, յարձակում եւ կողոպուտներ գործում: Վարուցանքի անհնարինութեան եւ ուտելիքի պաշարների սպառման այս պայմաններում՝ երկրում սով է սկսւում[1]:

Իրավիճակն աւելի է սրւում՝ 1783 Նոյեմբերի 10ին Հուսէյն Ալի խանի մահին յաջորդած ներքին գահակալական պայքարի պատճառով: Խանութեան մեծամեծները Երեւանում հաւաքւում են խորհրդի, հրաւիրում են նաեւ կաթողիկոսին: Կարնեցին 1783 Դեկտեմբերի 20ին Կ. Պոլիս՝ Իսահակ վարդապետին գրած նամակում, տեղեկացնում է որ խորհուրդը որոշում է խան հաստատել Հուսէյն Ալի խանի աւագ որդի Ղուլամ Ալիին (1783-85)[2]: Վերջինիս կարճատեւ կառավարման ընթացքում երկրում ստեղծուած ծանր ու խառը վիճակի մասին Կարնեցին 1784 Յուլիսի 16ին գրում է. «*Զի մեք թէ յորպիսի՞ հոգոց եւ փառապանաց միջի կամք ի ձեռս կեղեքիչ եւ խորամանկ պարսից, որք ոչ փան թոյլ առ ի բանալ զաչս մեր*»[3]: 1784 Հոկ-

---

[1] Այս ամէնի մասին կաթողիկոսի արժէքաւոր տեղեկութիւնները տե՛ս՝ Վարդան Գրիգորեան, *Երեւանի Խանութիւնը XVIII դ. վերջում*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1958, էջ 70:

[2] Նոյն, էջ 81-82:

[3] *Դիւան հայոց պատմութեան, հտր. Ա.*, աշխ.՝ Վ. Գրիգորեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 441:

տեմբերի 14ին նոյն վարդապետին նա գրում է «…*քանզի յաւուրց սպանման իշխողին երկրիս մինչեւ ցարդ կարօտ մնամք խաղաղութեան*…»[4]:

Ղուլամ Ալին դաւադրութեան զոհ դառնալով, իշխանութեան է գալիս նրա եղբայր Մահմէդ խանը (1785--1803): Վերջինիս անչափահաս լինելու պատճառով իյայտ են գալիս խնամակալութեան միքանի թեկնածուներ, որոնց միջեւ ռազմական բախումը դառնում է անխուսափելի: Այն կանխւում է Կարնեցու շնորհիւ, որը կարողանում է հաշտեցնել կողմերին[5]:

Նոր խանի գահակալութեամբ, երկրում սկիզբ են առնում նոր խժդժութիւններ: Սպանուած խանի կողմնակիցները՝ դժգոհ Մահմէդ խանից, ապստամբում են նրա դէմ, յարձակումներ գործում խանութեան գիւղերի վրայ: Այրմալու ցեղի[6] ահից Էջմիածնի շրջակայ հայ եւ թաթար գիւղերի բնակիչները թողնում են բնակավայրերն ու հաւաքւում Էջմիածնի վանքում: Ապստամբածներից մի խումբ յարձակւում եւ յափշտակում է վանքի եւ Վաղարշապատ[7] գիւղի բնակիչներին պատկանող ընտանի կենդանիները[8]:

Ստեղծուած անկայուն վիճակը շարունակւում է երկար: Իրավիճակին միջամտում է վրաց արքայ Հերակլ Բ.ը (1744--98)[9]՝ սպառնալով օգնական զօրք ուղարկել Մահմէդ խանին, ապստամաբութիւնը ճնշելու: Այս միջամտութիւնը անհանգստացնում է կաթողիկոսին: Վերջինս չկամենալով կռիւների շարունակուելը եւ կանխելու համար նոր աւերածութիւններ, կրկին միջնորդում եւ յաջողում է հաշտութիւն կայացնել[10]:

Սակայն երկրում կայունութիւն չի հաստատւում. խանութեան կենտրոնախոյս ուժերը շարունակում են խռովութիւնները: Կաթողիկոսն իր նամակներում ու գրութիւններում նկարագրում է Խոյի, Նախիջեւանի եւ Երեւանի խանութիւնների միջեւ ընթացող ընդհարումները: Օգտուելով առիթից, մուղանլու թուրքերն[11] ասպատակում են երկիրը, յարձակւում Էջմիածնի վանքապատկան Օշական գիւղի վրայ, գրաւում վանքի հողերը:

---

[4] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 474:

[5] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, հտր. Բ.*, հրատ.՝ Վ. եւ Հ. Տէրոնեան, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 3201:

[6] Սկզբնաղբիւրներում յիշատակուող այրմալու ցեղը հաւանաբար այրումներն են՝ այժմեան ադրբեջանցի անունը կրող ժողովրդի ցեղախմբերից մէկը:

[7] Որպէս խոշոր կալուածատէր Էջմիածնի վանքն ունէր բազմաթիւ շինութիւններ, հողատարածքներ, ջրանցքներ, գիւղեր եւն., որոնցից տարեկան զգալի եկամուտ էր ստանում: Վանքը ութ վանքապատկան գիւղերից՝ Վաղարշապատ, Օշական, Աշտարակ, Եղվարդ, Աղաւնատուն, Ծաղկավանք, Կիրաշլու (վերջինս աւերուած էր) ստանում էր համախառն բերքի տասանորդը, այսինքն՝ *մուլքը*:

[8] Գրիգորեան, *Երեւանի Խանութիւնը*, էջ 91:

[9] Երեւանի բէկլարբէկ Հասան Ալի խանի (1755-62) իշխանութիւնից սկսած Երեւանի խանութիւնը դարձել էր վրացական պետութեան հարկատու, ինչը հնարաւորութիւն էր տալիս վրացական արքային միջամտել խանութեան դէպքերին:

[10] *Դիւան…, հտր. Ա.*, էջ 58-59, նաեւ՝ ծան. 1, էջ 92-93:

[11] Նախիջեւանի տարածքում բնակուած թիւրքական ծագմամբ քոչուոր ցեղ:

Այդ իրադարձութիւնների, ինչպէս նաեւ Պարսկաստանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակի մասին դարձեալ պատմում է Կարնեցին[12]: Կ. Պոլսում Էջմիածնի նուիրակ[13] Մինաս վարդապետին 1790 Սեպտեմբերին հասցէագրած նրա նամակներից մէկը կրում է «Պատմութիւն գալստեան խօյեցւոց եւ նախչուանցւոցն յերկիրս Երեւանու, եւ վնասուցն զոր անցուցին ընդ սա եւ ընդ Սուրբ Աթոռս» խորագիրը: Այն նուիրուած է երեք խանութիւնների միջեւ տեղի ունեցած բազմաթիւ զինուած ընդհարումների նկարագրութեանը, թէ ինչպէս արշաւող զօրքերը փոխադարձաբար աւերում են իրենց հակառակորդների գիւղերը: Նամակում նկարագրւում են Արեւելեան Հայաստանի բնակչութեան թշուառ ու ողբերգական վիճակը, Էջմիածնում ստեղծուած տագնապալի իրավիճակը, արշաւող զօրքերի հրամանատարների ու Երեւանի խանի՝ կաթողիկոսին արուած իրարամերժ առաջարկները, վրաց թագաւորի կողմից Երեւանի խանին զինուած օգնութիւն ցոյց տալու առաջարկը եւն.[14]:

Նամակում ասւում է որ այդ ամէնն սկսուեց Խոյի խանի եղբայր Ջաֆարղուլի եւ Նախիջեւանի Քելբալի խաների դէմ Երեւանի խանի անյաջող արշաւանքներից, ինչից յետոյ Երեւանի խանը փախչում եւ ապաստանում է Երեւանում՝ այնտեղ ժողովելով շրջակայքի բնակչութեանը: Կաթողիկոսը՝ Երեւանի խանի անխոհեմ արարքների, ոչ-ճիշտ ռազմական քաղաքականութեան պատճառ է նկատում խանի «մանուկ»[15] լինելը: Պարսկական տեղական խաները, հետապնդելով Մահմադ խանին մինչեւ Երեւանի բերդ, աւերում ու հրկիզում են ճանապարհի բնակավայրերը: Այնուհետեւ ամրանում են Նորագաւիթ գիւղում, որտեղից Ջաֆարղուլի խանը կաթողիկոսին նամակ է յղում, յստակացնելով որ խաները կաթողիկոսի հետ թշնամութիւն չունեն, այլ՝ Երեւանի խանի: Նման բովանդակութեամբ նամակ է գրում Կարնեցուն նաեւ Երեւանի խանը՝ փորձելով իր կողմն ուղղել կաթողիկոսի

---

[12] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 122-23, 125, 127:

[13] Էջմիածնի կողմից թեմեր գործուղուած անձ, ով պէտք է տուեալ վայրում հաւաքէր հոգեւոր հասոյթը, ժողովարարութիւն՝ հանգանակութիւն կատարէր յօգուտ թեմի, զբաղուէր հոգեւոր այլ գործերով:

[14] Այս նամակի բնագիրը գտնւում է Մատենադարանի կաթողիկոսական դիւանում (թղթ. 6, վաւ. 189), իսկ սեւագիր օրինակն ընդգրկուած է 4501 թուահամարի ձեռագրում (թթ. 1461-62): Սեւագրի մէջ նշուած չէ ամսաթիւը, դա գրուել է մաքրագրելու եւ առաքման ժամանակ: Այս նամակին որոշ չափով անդրադարձել են Հ. Շահխաթունեանը (*Դիւան հայոց պատմութեան, հտր. Ա-Բ.*, էջ 18-23) եւ Գրիգորեանը (*Երեւանի խանութիւնը,* էջ 143-45): Նամակն ամբողջութեամբ հրատարակուել է Գրիգորեանի կողմից («Ղուկաս Կարնեցու մի անտիպ երկասիրութիւնը», *Բանբեր Մատենադարանի*, 6:1962, էջ 429-35), այնուհետեւ՝ նոյն հեղինակի կողմից կազմուած աշխատասիրութեան մէջ (Վ. Գրիգորեան, *Դիւան հայ վիմագրութեան, հտր. Բ.*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 2003, էջ 556-58):

[15] Նկատի ունի 18 տարեկանում գահակալած Երեւանի Մահմէդ խանին:

համակրանքը: Նորագաւիթում բանակած խաներն իվերջոյ ստիպուած հեռանում են գիւղից՝ պարենի պակասի պատճառով (կաթողիկոսը գրում է սովի պատճառով, ինչը, բնականաբար վերաբերւում է ամբողջ երկրին): Այնուհետեւ, քանի որ լուրեր են տարածւում, որ վրաց արքան զօրքով գալիս է, Օգոստոսի 29ին նահանջելով դէպի Էջմիածին, երկու խաների զօրքերը հրկիզում են իրենց ճանապարհին ընկած Փարաքար գիւղը, աւերում բնակավայրերը: Շրջակայքի մահմեդականները եւս, օգտուելով առիթից, գլուխ են բարձրացնում, մտնում վանքի տարածքները, յափշտակում վանքի ու շրջակայ բնակիչների նախիրը, կողոպտում հայ բնակչութեանը:

Հասնելով Ս. Գայիանէ վանքի մօտերքը, պարսիկները պահանջում են, որ կաթողիկոսն իրենց մօտ բանագնաց ուղարկի, սակայն վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, որ վանքը վերահսկւում է Երեւանի խանի մարդկանց կողմից[16]: Կարնեցին սակայն, Խաչատուր եւ Ներսէս վարդապետերի միջոցով գրութիւն է յղում խաներին՝ փորձելով մեղմել իրավիճակը: Կաթողիկոսն ակնարկում է, որ ընդհանուր բարեկամութիւնը խախտել են խաները՝ վանքի նախիրը քշել-տանելով, միքանի հոգու գերելով եւ պահանջում է վերադարձնել աւարն ու մարդկանց: Խաները դրա փոխարէն կաթողիկոսից ընծաներ են պահանջում, ինչը չստանալով, հեռանում են, ետդարձի ճանապարհին աւերածութիւններ կատարելով[17]:

Նկարագրելով խաների արշաւանքի հետեւանքները, Մաղաքիա արք. Օրմանեանը գրում է. «*Արշաւանքին արդիւնքը Երեւանի գաւառին հայերուն ընդհանրապէս, եւ մայր աթոռին մասնաւորապէս կրած վնասներն եղան, ոչ միայն ի թշնամեաց անտի, այլեւ յերկրացի աւազակասարաս սրիկայիցն*»[18]:

Երեւանի խանը մտադրւում է դէպի Նախիջեւան արշաւանք կազմակերպել՝ խաներից վրէժ լուծելու համար: Խանի 1790 Հոկտեմբերի արշաւանքն անյաջողութեան է մատնւում. «*…եւ այսքանեօք յարուցմամբք զերկիրս եւ զմեզ վնասեաց, քան թէ զթշնամիսն*»[19]: Կարնեցին նկարագրում է այս արշաւանքների հետեւանքով Խոյի հայերին, Արարատեան տարածքի, յատկապէս Երեւան քաղաքի բնակիչներին պատճառուած վնասների մասին, վկայում որ այդ արշաւանքի պատճառով երկրում բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր աւերուեցին, բնակիչներ զոհուեցին, մարդիկ գերուեցին[20]:

Արշաւանքների ընթացքում, ինչպէս նախկինում, խաները փորձում են ձեռք բերել հայոց կաթողիկոսի գործակցութիւնը: Ջաֆարղուլի բէկը Ղու-

---

[16] Օրմանեան, էջ 3212:

[17] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 146-47:

[18] Օրմանեան, էջ 3213:

[19] *Դիւան հայոց պատմութեան, հտր. Բ.*, էջ 568:

[20] Օրմանեան, էջ 3213, ծան. 1, էջ 141:

կաս կաթողիկոսին նամակ է գրում՝ իր բարեկամութիւնն առաջարկելով կաթողիկոսին՝ ընդդէմ Երեւանի Մահմէդ խանի:

Մահմէդ խանն իր հերթին վախենալով, որ Ջաֆարղուլի բէկը կարող է յարաբերութիւնների մէջ մտնել կաթողիկոսի հետ եւ նրանից ստանալ պարեն իր զօրքի համար, իր հերթին նամակ է ուղարկում Կարնեցուն՝ գրելով, որ ինքը պատրաստութիւն է տեսնում թշնամու վրայ յարձակուելու: Հետեւաբար, խանն արգելում է կաթողիկոսին որեւէ յարաբերութիւն ունենալ Ջաֆարղուլի բէկի հետ, իսկ վերջինիս զօրքերը Էջմիածնի վրայ գալու դէպքում պահանջում է դիմադրութիւն ցոյց տալ եւ ետ մղել[21]:

Փաստօրէն, երկու կողմերի համար խիստ կարեւոր էր կաթողիկոսի դիրքորոշումը, քանի որ վերջինս իր հեղինակութեամբ կարող էր նպաստել որեւէ կողմի յաջողութեանը: Բացի այդ, Էջմիածինը նրանց համար կարող էր հանդիսանալ պարենի եւ դրամի աղբիւր, ծառայել որպէս օթեւան, ինչից մշտապէս օգտւում էին պարսիկ առաջնորդները:

Կաթողիկոսը, չարձագանգելով Ջաֆարղուլի բէկի առաջարկին, նրա մօտ ո՛չ մարդ է ուղարկում, ո՛չ ընծայ, ինչը վերագրւում է կաթողիկոսի վախկոտ բնաւորութեանը[22]: Կարծում ենք, կաթողիկոսն իր քայլը կատարել է հաշուարկելով երկու խաների՝ միմեանց նկատմամբ յաղթանակի հասնելու հաւանականութիւնն ու նրանցից ունեցած Հայաստանի կախուածութիւնը: Իվերջոյ, Երեւանի խանութիւնը գտնւում էր Մահմէդ խանի տիրապետութեան տակ եւ կաթողիկոսի օգնութիւնը Ջաֆարղուլիին կարող էր խիստ թանկ արժենալ ոչ միայն կաթողիկոսի, այլեւ հայ բնակչութեան համար:

Դեռեւս չէին դադարել երկրի առաջ ծառացած ներքին ու արտաքին սպառնալիքները, երբ սկսուեց պարսիկ Աղա Մուհամադ խանի[23] արշաւանքը: Նա 1794ին Պարսկաստանի շահ հռչակուելով՝ մտածում է վերահաստատել պարսկական տիրապետութիւնն Արեւելեան Հայաստանի, Քարթլի-Կախէթի եւ պարսկահպատակ միւս տարածքների վրայ: Լսելով շահի առաջխաղացման մասին, կաթողիկոսը նախազգուշական միջոցների է դիմում: Նոյն 1794ին նա միաբանների ժողով գումարելով, Էջմիածնի բոլոր թանկարժէք եւ հազուագիւտ զգեստները, իրերը, գրքերը եւն. 21 սայլով ուղարկում է Թիֆլիս[24]:

Այդ ամէնի մասին 1794 Յունիսին Կարնեցին Էդիրնէի (Ադրիանուպոլիս) մահտեսի պարոն Գէորգին գրում է, որ շահ դարձած աղա Մուհամադը Թաւրիզի Սուլէյման սարդարին 20,000 զօրքով ուղարկել է Թաւրիզ, տա-

---

[21] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 145:

[22] Նոյն:

[23] Աղա Մուհամադ խանը (1743--97) Պարսկաստանում Ղաջարների Հարստութեան հիմնադիրն էր. նա շահ հռչակուելով, նուաճողական լայն ծրագիր է մշակում Անդրկովկասի դէմ՝ փորձելով պարսից տիրապետութիւնը տարածել այստեղ:

[24] Գ. Աղանեանց, *Դիւան հայոց պատմութեան Դ.*, Տպ. Տ. Ռօտինեանցի, Թիֆլիս, 1902, էջ ԾԷ:

ռածքի բոլոր խաներին հպատակեցրել է, եւ լուրեր կան, որ ինքն էլ գալիս է դէպի Երեւան: «Անհնարին աղէտք հասին բնակչացն»[25]՝ գրում է Կարնեցին Սուլէյմանի ու Խոյի խանի արշաւանքների հետեւանքների մասին:

Երեւանի խանը, անհանգստանալով, կաթողիկոսին հրաւիրում է ստեղծուած իրավիճակի շուրջ խորհրդակցութեան: Այստեղ է հաւաքւում նաեւ խանի կողմից տեղահան արուած շրջակայքի եւ Երեւան քաղաքի բնակչութիւնը: Այս իրադարձութիւնների մասին կաթողիկոսը Կ. Պոլիս՝ մահտեսի Նիկողայոս Եղիազարեանին 1794 Յունիսին գրում է. «*...այժմոյս կարի վրդովեալ գոյ երկիրս մեր եւ մեզ ոչ գոյ հանգստութիւն*»[26]:

Երեւանում գտնուելու ընթացքում կաթողիկոսը մի վարդապետի միջոցով նամակ է գրում շահին՝ փորձելով մեղմել վերջինիս բարկութիւնը եւ համոզել չյարձակուել երկրի վրայ[27]: Կարելի է ենթադրել, որ ամէնայն հաւանականութեամբ կաթողիկոսը այն գրել է Երեւանի խանի առաջարկով եւ ցանկութեամբ: Մինչ կաթողիկոսը Երեւանում էր, շահի ու սարդարի կողմից գրութիւն է ուղարկւում թէ առայժմ յարձակում չեն գործի:

Այնուամէնայնիւ, կաթողիկոսը չվստահելով շահի խոստմանը, Թաւրիզի, Խոյի եւ այլ վայրերի հայ հոգեւոր եւ աշխարհական գործիչների միջոցով իր ուշադրութեան կենտրոնում է պահում շահի ճանապարհի ուղղութիւնը[28]: Ծանօթների միջոցով տեղեկանալով նրա Արդաբիլ հասնելու մասին, Կարնեցին նրա մօտ է ուղարկում Յովհաննէս վարդապետին՝ խնդրելով արշաւանքի ժամանակ Էջմիածնի վանքը զերծ պահել աւերից ու կողոպուտից: Նոյնաբովանդակ նամակներ է ուղարկում շահի զինակիցներ Միրզա Շեֆիին, Թաւրիզի սարդար Սուլէյմանին, Հուսէյին ու Ջաֆարղուլի խաներին[29]: Յատկանշական է, որ Կարնեցին առաջին անգամ նշուած անձանց, ինչպէս կարգն է, նուէրներ չի ուղարկում՝ սպասելով դէպքերի յետագայ ընթացքին[30]:

Կաթողիկոսի ջանքերի եւ փրկագինի շնորհիւ Էջմիածինը զերծ է մնում յարձակումներից: Այդուհանդերձ, կաթողիկոսը շարունակում էր հաւատ չընծայել շահին, ինչի ապացոյցն է այն, որ նա նախապատրաստական աշխատանքներ էր տանում հնարաւոր յարձակումից խուսափելու համար, այդ թւում՝ վանքի նախիրը տեղափոխում է Գօշավանք[31]:

Այդ ընթացքում Երեւանի խանի փորձերը՝ ռազմական օգնութիւն ստանալու Հերակլ արքայից, ապարդիւն են անցնում եւ նա հարկադրուած

---

[25] Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ (ՄՄ), ձեռ. հմր. 4538, թ. 33ա:

[26] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թ. 17ա:

[27] ՄՄ, ձեռ. հմր.4538, թթ. 17ա, 22բ:

[28] ՄՄ, ձեռ. հմր. 4424, թ. 120ա:

[29] *Դիւան..., հտր. Ա.*, էջ 28, ծան. 1, էջ 156:

[30] ՄՄ, ձեռ. հմր. 4424, թ. 120ա:

[31] *Դիւան..., հտր. Ա.*, ծան. 1, էջ 157:

պատրաստւում է Սուլէյման սարդարի մօտ պատանդներ ու ընծաներ ուղարկել: Ամբողջ ծախսը կատարւում է ժողովրդի հաշուին: Կաթողիկոսը գրում է, որ խանի մարդիկ կատաղութեամբ գիւղացիներից սկսում են հարկեր հաւաքել: Էջմիածնի վանքից պահանջում են մեծ գումար, կաթողիկոսն աշխատում է պակասեցնել գումարը, բայց չի յաջողւում. «…*Եւ որքան փորձեցինք պակասացնել՝ բողոքելով, խնդրելով, չեղաւ*»[32]՝ գրում է Կարնեցին Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին:

Գումարի մի մասը կաթողիկոսը փոխ է առնում Երեւանի վաճառականներից: Աւարն ու գումարը հաւաքուելուց յետոյ Երեւանի խանն այդ ամէնն ուղարկում է Նախիջեւան՝ Սուլէյման սարդարին, վերջինս էլ՝ Աղա Մուհամադ շահին[33]:

Սակայն դրանով եւս յարձակման վտանգը չի վերանում եւ կաթողիկոսը, ոչ ոքից օգնութիւն չյուսալով, փորձում է ինքնուրոյն բանակցութիւններ վարել շահի ներկայացուցիչ սարդարի հետ եւ անձամբ գնում է սարդարի մօտ: Այդ այցի հետեւանքների վերաբերեալ նա գրում է. «…*նեղութիւն եւ վնասս կրեցաք եւ ծանր պարտքեր դիզուեցին, բայց Աստծոյ նախախնամութեամբ շինութիւնը Սուրբ Աթոռի եւ մեր գեղջն անխանգարելի մնաց*»[34]: Փաստօրէն կաթողիկոսը թանկարժէք նուէրներ եւ մեծ գումարներ նուիրաբերելով, հերթական անգամ վանքը զերծ է պահում յարձակումից:

1795 Յունիսի վերջին Աղա Մուհամադ շահը 50,000 զօրքով անցնում է Արաքսը եւ ներխուժում Անդրկովկաս: Միաժամանակ նրա զինակից Ալիղուլի խանը պաշարում է Երեւանի բերդը: Աւելի քան մէկ ամիս (35 օր) տեւած Երեւանի պաշարման ընթացքում Երեւանն ու ամբողջ երկիրը ենթարկւում են մեծ աւերածութիւնների:

1795 Յուլիսի 27ին Կարնեցին բանագնաց է ուղարկում Ալիղուլի խանի մօտ, իսկ յաջորդ օրը գնում խանի բանակը՝ բանակցութիւններ վարելու փրկագնի վերաբերեալ. «*Գնաց Ղուկաս կաթուղիկոս բազում ընծայիւք ի տեսութիւն նմա, եւ մեծարի ի նմանէ առ երեսս ըստ խորամանկութեան Պարսից, բայց եւ ինքն Աղա-մահմատ շահ անցեալ ընդ Երասխ ի Խուտափրին՝ դիմէ ի յԱրցախ…*»[35]: Խանը կաթողիկոսից պահանջում է 10,000 թուման[36]. վերջինս կարողանում է պակասեցնել գումարը՝ 4000ի: Այդքան գումար չունենալով, Կարնեցին պարտք է վերցնում Զաֆարղուլի խանից՝ 400, Մարաղայի Ահմէդ խանից՝ 200 թուման[37]: Փրկագնի միջոցով էջ-

---

[32] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թթ. 27ա, 45ա:

[33] *Դիւան…, հտր. Ա.*, ծան. 1, էջ 154:

[34] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թ. 45ա:

[35] «Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար», *Կռունկ հայոց աշխարհին*, Թիֆլիս, 1862:Դ, էջ 284:

[36] Պարսկական դրամական միաւոր:

[37] ՄՄ, ձեռ. հմր. 4481, էջ 351ա-352ա:

միածնի մայր աթոռն ազատւում է թալանից, իսկ նրա պարիսպների ներսում հաւաքուած հայ բնակչութիւնը՝ կոտորածից ու գերեվարումից[38]:

1795 Օգոստոսի վերջերին Երեւանի խանի եւ Աղա Մուհամադ շահի ներկայացուցիչ Ալիղուլի խանի միջեւ հաշտութիւն է կնքւում, ապա շահն անցնում է հիւսիս եւ աւերելով Թիֆլիսը, գնում Գանձակ, հուսկ՝ Մուղանի դաշտ:

Թիֆլիսի ճանապարհին նա աւերում ու կողոպտում է ամէն ինչ, յափշտակելով նաեւ Էջմիածնի 6 սայլ կազմած գոյքը (նաեւ՝ Ղազար Ա. Ջահկեցի (1737--51) կաթողիկոսի թագը, վակասը եւ շուրջառը) եւ գերիներ տանում[39]:

Կաթողիկոսը հասկանում էր, որ վտանգը չէր նահանջել եւ Թիֆլիսի բախտին կարող էին ենթարկուել նաեւ մայր աթոռն ու շրջակայքը: Ուստի, երբ լուրեր են հասնում, որ Աղա Մուհամադը Թիֆլիսից վերադառնում է, նա փորձում է նոր բանակցութիւններ սկսել շահի հետ: 1796ին նա Դաւիթ եւ Յովհաննէս վարդապետերին թանկարժէք նուէրներով ուղարկում է շահի մօտ, յայտնում նրան իր հպատակութիւնը եւ հրովարտակ խնդրում: Շահը վարդապետերին ընդունում է «*...հաճութեամբ ...եւ հրովարտակաւ միամտութեամբ դարձուցանէ անդրէն*»[40]:

Կաթողիկոսի ձեռնարկումների արդիւնքում Հոկտեմբերին շահը Մուղանի դաշտից Երեւան է ուղարկում Սուլէյման սարդարին, որն իր հետ բերում է նաեւ հրամանագիր կաթողիկոսի անունով: Կարնեցին այն ստանալու դիմաց ստիպուած է լինում թանկարժէք նուէրներ տալ, որից «*...անպանելի վնասակրութիւն եղեւ եւ ի գորգոյ եւ յայլոց դատարկեցաք*»[41՝] գրում է նա: Այդ գնով կաթողիկոսին յաջողւում է ստանալ շահի կողմից հաստատուած կաթողիկոսի իրաւունքներ, իսկ Էջմիածինը զերծ պահել հնարաւոր հարստահարութիւններից ու թալանից:

Այդ ընթացքում Երեւանի խանն իր հերթին ստիպուած էր գնալ Աղա Մուհամադ շահի մօտ՝ իր հպատակութիւնը յայտնելու, ինչի համար կաթողիկոսից վերցնում է 200 թուման, 7 ջորի եւ 14 ուղտ: Կարնեցին ստիպուած է լինում 1795 Դեկտեմբերին նամակով Կարինի հայ մեծահարուստ պարոն Հայրապետից խնդրել 10,875 ղուրուշ[42]:

Աղա Մուհամադ խանի արշաւանքները ծանր հարուած հասցրին Անդրկովկասի բնակչութեանը: Երեւանի խանութեան թշուառ վիճակի, սովի,

---

[38] *Հայոց պատմութիւն, հտր. 3, գիրք I*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2010, էջ 380:

[39] Հայրապետը յետագայում բազմաթիւ հայ եւ վրացի գերիների դրամով գնեց եւ մեծ դժուարութեամբ վերադարձրեց նաեւ կողոպտուած աթոռապատկան իրերի մեծ մասը: Լսելով, որ Ղազար կաթողիկոսի կողոպտուած կաթողիկոսական իրերը ձեռքից ձեռք են անցնում, նա տարբեր ուղղութիւններով նամակներ է յղում՝ կոչ անելով գտնել, փրկագնել եւ ուղարկել մայր աթոռ (Աղանեանց, էջ ԾԷ-ԾԸ. նաեւ՝ Օրմանեան, էջ 3216-17):

[40] *Դիւան..., հտր. Ա.*, ծան. 1, էջ 177, 180:

[41] Նոյն, էջ 166:

[42] Նոյն, էջ 169:

աղքատութեան, հարկերի, բնակչութեան երկիւղի, Երեւանի խանի կողմից բնակչութեան հանդէպ սահմանուած նոր պարտաւորութիւնների, մայր աթոռի տնտեսական ծանր վիճակի մասին վկայում են Կարնեցու նամակները[43]: «*...Զի յայս երեք տարիս մինչ ներքինի բռնաւորն յայս կողմն շարժեցաւ, անհնարին աղէտք հասին յարեւելեան տանս եղելոց մերազնեայց եւ չափազանց վնասք Սուրբ Գահիս եւ նեղութիւնք մեզ...*»[44]՝ գրում է Կարնեցին Իզմիրի Կարապետ Չելիկեանին: Ի լրումն այս ամէնի, Ալիղուլի խանը հրաման է արձակում Արարատեան Երկրից իր համար հայ օրիորդներ հաւաքել[45]: Նա նաեւ նուէրի կարգով մեծ գումար է պահանջում կաթողիկոսից: Վերջինս գնում է Երեւան, 38 օր մնում այնտեղ՝ փորձելով պակասեցնել գումարը, բայց չի յաջողւում, ստիպուած մի մասը վճարում է, միւսի դիմաց «սանատ»՝ պարտամուրհակ տալիս[46]:

Շահն այդ ընթացքում պատրաստւում էր դարձեալ յաձակուել Այսրկովկասի վրայ, ինչը նորից մեծապէս անհանգստացնում է կաթողիկոսին: Արշաւանքն սկսուեց 1797ի գարնանը, սակայն Մայիսի կէսերին շահը սպանւում է Շուշիում: Այդ առիթով կաթողիկոսը Հերակլին ու Գէորգի արքայորդուն նամակով յայտնում է բռնակալից ազատուելու իր ուրախութիւնը[47]:

Անգամ շահի մահից յետոյ երկար ժամանակ երկիրը չի կարողանում ուշքի գալ արշաւանքների հետեւանքներից. շարունակւում են պարսկական ասպատակութիւնները: Կարնեցու գահակալութեան վերջին տարիներին Երեւանի վրայ յարձակւում է Մակուի սուլթանի որդի Հասան խանը եւ գրաւում բերդը: Կաթողիկոսը գնում է խանին տեսութեան՝ հաւանաբար որոշելու խանի նպատակներն ու նրա հետ բանակցելու հնարաւորութիւնները[48]:

Իրենց կեղեքիչ քաղաքականութիւնը շարունակում էին տեղի խաները եւս. «*Աչք չենք բացում թէ՛ բռնաւորի կողմից, թէ՛ եւր բարձման նրա՝ ի նորացնոցն նորա, նաեւ ի մերձաւորացից մերոց տզրկաբարոյ եւ կեամաշ կեղեքչաց, որով իբրու գոյաթափ եղեւ Սուրբ տունս...*»՝ գրում է Կարնեցին երկրի ներքին ու արտաքին վիճակի մասին[49]:

---

[43] *Դիւան..., հտր. Ա.*, ծան. 1, էջ 178-79, 182:

[44] ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 60բ:

[45] Իմանալով այդ մասին, Կարնեցին կարգադրում է ութ տարեկանից բարձր բոլոր աղջիկներին ամուսնացնել, եւ երբ խանի ծառայողները կամենում են իրագործել նրա հրամանը, Երեւանի խանութեան մեջ խանին տանելու օրիորդ այլեւս չէր մնացել (Մ. Մսերեանց, *Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Սիմէօնէ մինչ Յովհաննէս Ը*, տպագրութիւն Ղարսաւաբ Մսերեանց, Մոսկուա, 1870, էջ 11):

[46] *Դիւան..., հտր. Ա.*, ծան. 1, էջ 182:

[47] ՄՄ, ձեռ. Հմր. 2922, թ. 33բ. նաեւ՝ Աղանեանց, էջ 657:

[48] *Դիւան..., հտր. Ա.*, էջ 34. նաեւ նոյնի՝ *Երեւանի խանութիւնը,* էջ 185:

[49] ՄՄ, ձեռ. հմր. 4538, թթ. 60բ, 67ա:

Երեւանի խանը որոշ դէպքերում փորձել է անգամ Էջմիածնի վանքից զինուորներ ստանալ[50]: Կաթողիկոսն ամէն գնով խուսափել է՝ փոխարէնը խանին ուղարկելով դրամական օգնութիւն: Խաները նաեւ տնտեսական պահանջներ էին ներկայացնում կաթողիկոսին: Բաւական է միայն նշել, որ Մահմէդ խանը Երեւանի բերդում շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով տանում էր Էջմիածնի վանքի համար աշխատող քարհատներին եւ միւս վարպետներին, ինչի պատճառով վանքի շինարարական աշխատանքները դանդաղում կամ կանգ էին առնում. «...*եւ զգփանեցեալսն եւս իշխօղն փանի վասն իւր շինուածոցն*»[51]՝ գրում է հայրապետը:

Ժամանակի այնպիսի թանկարժէք ու կարեւոր առարկայ, ինչպիսին ժամացոյցն էր, պարսիկ իշխողները մշտապէս պահանջել են Էջմիածնից: Աւելին, դրանց անսարքանալու դէպքում ժամացոյցները վերադարձւում էին Էջմիածին՝ վերանորոգման տալու[52]: 1787 Յունիսին Խոյ եւ Թաւրիզ յղած նամակները փաստում են, որ Մաղազբերդի[53] բէկերը, ինչպէս նաեւ այլ խաներ կաթողիկոսից խնդրել են ուղարկել ժամացոյց[54]:

Այսպիսով, մայր աթոռն ու երկիրը կողմնակի յաւակնորդներից զերծ պահելու նպատակով կաթողիկոսը հարկադրուած որդեգրել էր խուսանաւող դիրքորոշում: Մի կողմից գործակցել պարսիկներին թշնամի ու նրանց դիմակայելու ընդունակ ուժերի հետ, միւս կողմից երբեմն ստիպուած էր լինում հանդէս գալ որպէս պարսիկ խաների պահանջների կատարածու:

Պարզւում է, որ Խոյի խաներից Սաֆաթալին ըմբոստանալով Ջաֆարղուլի խանի դէմ, ապաստանել էր թիֆլիսաբնակ երեւելի Եսայի Արղութեանցի ընտանիքում: Ջաֆարղուլին կաթողիկոսին միջնորդում է՝ խանին յանձնել իրեն: Կաթողիկոսն Արղութեանին յորդորում է յանձնել խանին՝ ըզգուշացնելով, որ Ջաֆարղուլին այժմ սարդար է եւ նրա խօսքը «զանց առնել ո՛չ լինէր»[55], քանի որ դա կարող էր վտանգաւոր հետեւանքներ ունենալ ամբողջ մայր աթոռի համար. «...*եւ եթէ ի կողմանէ փաճկիդ զիրս պահանջեցէք մեք եմք վճարելոց, քանզի մինչ բռնաւորն ծանեաց ձեզ եւ գրեաց մեզ հոգն արկանէ ի պարանոց մեր եւ ծանրութիւն ի վերայ Սրբոյ Աթոռոյս է*»[56]:

Նման իրավիճակում Կարնեցին աչալուրջ հետեւում էր շրջակայ երկրների ամենատարբեր իրավիճակներին: Թէ որքան լաւատեղեակ էր նա ժամանակի քաղաքական իրադարձութիւններին՝ երեւում է իր նամակներից, որոնք տեղեկացնում են շրջակայ պետութիւնների վերաբերեալ[57]:

---

50 *Դիւան..., հտր. Բ.*, էջ XVI:

51 Նոյն, էջ 569:

52 Նոյն, էջ 255, 256:

53 Բերդ Արարատեան Երկրում, պատմական Շիրակում, Ախուրեան գետի ափին:

54 *Դիւան..., հտր. Բ.*, էջ 253-54, 515:

55 ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 63բ:

56 ՄՄ, ձեռ. հմր.4538, թ. 64ա:

57 *Դիւան..., հտր. Ա.*, ծան. 1, էջ 128. նոյնի՝ *Դիւան..., հտր. Բ.*, էջ 137-38:

Նամակներն ու Կարնեցու գրութիւններն արտայայտում են կաթողիկոսի նուրբ դիւանագիտութիւնը, շրջահայեաց ու զգուշ վերաբերմունքը: Կարնեցին իրեն յատուկ զգուշաւորութեամբ Կ. Պոլսի պատրիարք Զաքարիային եւ այլոց գրած նամակներում սոսկ փոքրիկ ակնարկներով, մէկ նախադասութեամբ ծանուցում է պարսկական արշաւանքների մասին՝ նշելով «երկրի վրդովելը», «երկրի խառնակ վիճակը»[58]:

Այսպիսով, Ղուկաս Կարնեցու հովուապետութեան շրջանում Հայոց Եկեղեցին շարունակեց իր քաղաքական շրջահայեաց գործունէութիւնը: Եկեղեցին իր արտաքին քաղաքական հայեցակարգով կարողացաւ պահպանել երկրի ներսում նուազագոյն խաղաղութիւնը: Իր գործունէութեամբ կաթողիկոսը կարողացաւ շատ անգամ Էջմիածնի վանքն ու շրջակայքի հայ բնակչութեանը զերծ պահել պարսիկների կողմից սպասուող իրական վտանգից: Միւս կողմից պահպանուեցին ու ամրապնդուեցին Էջմիածնի եւ հայկական թեմերի, այդ թւում՝ պարսկական, յարաբերութիւնները:

THE SOCIO-POLITICAL ROLE PLAYED BY THE PASTOR CATHOLICOS GHUKAS KARNETSI (1780-1799)

(Summary)

HASMIK AMIRJANYAN (Amirjanyan.hasmik@rambler.ru)

The article highlights the role played by the Catholicos Ghukas Karnetsi (1780-1899) from his seat in the Cathedral of Holy Etchmiadzin at a time when Eastern Armenia was under Persian rule and the local khans and emirs fought against each other.

The paper argues that the Catholicos played a role that went far beyond his religious mission. The recurring fighting between the different local rulers devastated the area, which was mainly populated by Armenians. The latter were forced into misery and were financially ruined. Catholicos Ghukas, as the religious leader of the Armenians, took the initiative to address the socioeconomic needs of his flock. However, his initiatives surpassed these needs as he acquired the role of peacemaker between the belligerent Persian rulers. At certain points the Catholicos preempted the attacks, invasions and infighting of neighboring rulers through mediation and offering gifts and presents in order to forestall the ruining of villages and residential areas mainly populated by Armenians.

[58] ՄՄ, ձեռ. հմր.4424, թթ. 100բ, 121ա: